



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

13 հունվարի 2026 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝ հետեւյալ կազմով.

նախագահող՝ դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնովի,

զեկուցող դատավոր Կ.Կ. Ջունուշպաեւի, դատավորներ՝ Է.Վ. Հայրիյանի, Դ.Պ. Ալեքսանդրովի, Ա.Ա. Ջաբարայի, Ե.Ժ. Իսմայիլովի, Մ.Տ. Կայիպովի, Ա.Բ. Կիշկեմբաեւի, Ն.Վ. Պավլովայի, Ա.Գ. Թունյանի,

մասնակցությամբ՝ դատական նիստի քարտուղար Բ. Մուխամետ ուուլուի,

լսելով զեկուցող դատավորին, հետազոտելով գործի նյութերը, դեկլարավելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 2-րդ, 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով՝

տրամադրում է սույն Խորհրդատվական եզրակացությունը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի եւ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» 2019 թվականի դեկտեմբերի 20-ի համաձայնագրի առանձին դրույթների պարզաբանման

վերաբերյալ՝ ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հակամենաշնորհային կարգավորման դեպարտամենտի հսկողության եւ ռազմավարական պլանավորման բաժնի խորհրդական Վլադիմիր Նիկոլայի Չիրկովի դիմումի:

I. Դիմողի հարցերը

1. Վ.Ն. Չիրկովը (այսուհետ՝ դիմող) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 32 հավելված հանդիսացող՝ «Եվրասիական տնտեսական միությունում սոցիալական երաշխիքների, արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին» հիմնադրույթի (այսուհետ՝ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթ) 53-րդ եւ 54-րդ կետերի, Պայմանագրի թիվ 2 հավելված հանդիսացող Եվրասիական տնտեսական միության ստատուտի (այսուհետ՝ Ստատուտ) 46-րդ կետի, ինչպես նաեւ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» 2019 թվականի դեկտեմբերի 20-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) առանձին դրույթները պարզաբանելու մասին դիմումով:

Վ.Ն. Չիրկովը, լինելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատակից, դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար պետական քաղաքացիական ծառայության ստաժի սահմանման հարցում աջակցություն ցուցաբերելու եւ, «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետին համապատասխան, Ռուսաստանի Դաշնության՝ կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքացիական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող դաշնային գործադիր մարմնի ղեկավարին

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի միջնորդագիրն ուղարկելու մասին դիմումով դիմել է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահին:

Դիմողը Հանձնաժողովի Գործերի կառավարման դեպարտամենտի տնօրենի ստորագրությամբ 2025 թվականի հուլիսի 9-ի թիվ 05-753 գրությամբ պատասխան է ստացել, որում հայտնվում էր, որ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետով սահմանված՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանների բացակայության պատճառով նա նման կենսաթոշակի իրավունք ձեռք չի բերում:

Ինչպես նշվում է գրության մեջ, երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանների բացակայության հիմնական պատճառներն էին «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետի պահանջներին անհամապատասխանությունը՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիության բացակայությունը եւ, մինչեւ Հանձնաժողովում աշխատելը՝ դաշնային պետական ծառայության պաշտոններ չգրադեցնելը:

2. Ըստ դիմողի (Ղազախստանի Հանրապետության քաղաքացի), ով ունի կացության կարգավիճակ Ռուսաստանի Դաշնությունում, Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի նորմերը թույլ չեն տալիս միանշանակ որոշել՝ արդյո՞ք հավասարության սկզբունքի ուժով թույլատրելի է Ռուսաստանի Դաշնությունում դաշնային պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման համար պետական քաղաքացիական ծառայության ստաժում ներառել Միության անդամ պետության քաղաքացու՝ այլ պետությունների տարածքում (տվյալ դեպքում՝ Ղազախստանի Հանրապետություն) ձեռք բերած աշխատանքի ստաժը:

3. Դիմողը խնդրում է Դատարանին տրամադրել խորհրդատվական եզրակացություն հետեւյալ հարցերի վերաբերյալ՝

3.1. Այն իրավիճակում, երբ ռուսաստանյան օրենսդրությունը Ռուսաստանի Դաշնությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացուն հնարավորություն է տալիս ակնկալել երկարամյա ծառայության կենսաթոշակի

ստացում նույն հիմունքներով, ինչ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների համար, արդյո՞ք «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետը, հավասարության սկզբունքի ուժով, թույլ է տալիս, ինչպես Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների դեպքում, այլ անդամ պետության քաղաքացու՝ Հանձնաժողովում աշխատանքի ստաժը հաշվառել որպես ստաժ, որն անհրաժեշտ է Ռուսաստանի Դաշնությունում երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար:

3.2. Արդյո՞ք Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետը ենթադրում է, որ մեկ անդամ պետության (Ռուսաստանի Դաշնության) տարածքում ձեռք բերված ստաժի ոչ բավարար լինելու դեպքում երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի առաջացման համար հաշվի է առնվում մյուս անդամ պետության տարածքում ձեռք բերված պետական ծառայության ստաժը:

3.3. Այն դեպքերում, երբ երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման համար պահանջվում է միջնորդագիր ուղարկել կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմին, արդյո՞ք Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի՝ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետի շրջանակներում նման միջնորդագիր ներկայացնելու պարտականությունն առաջանում է՝ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետի անալոգիայով:

3.4. Արդյո՞ք Համաձայնագրի գործողության ներքո ընկնում են Միության՝ անդամ պետության քաղաքացիներ հանդիսացող եւ այլ անդամ պետության տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող միջազգային ծառայողները:

3.5. Դատարանի Ստատուտի 46-րդ կետի համաձայն՝ Դատարանը Միության մարմինների եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների դիմումի հիման վրա իրականացնում է Պայմանագրի, Միության

շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների՝ աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված որոշումների դրույթների պարզաբանում: Արդյո՞ք դա նշանակում է, որ դիմողը, հանդիսանալով աշխատակից, կենսաթոշակի անցնելիս կորցնում է պարզաբանման համար Դատարան դիմելու հնարավորությունը, չնայած այն հանգամանքին, որ նրան կենսաթոշակ նշանակելու հարցը մնում է բաց:

II. Ընթացակարգը Դատարանում

4. Դատարանի մեծ կոլեգիայի 2025 թվականի սեպտեմբերի 24-ի որոշմամբ՝ Վ.Ն. Չիրկովի դիմումն ընդունվել է վարույթ:

Ստատուտի 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ):

Կանոնակարգի 75-րդ հոդվածին համապատասխան՝ դիմողի կողմից առաջադրված հարցերով գործի նախապատրաստման շրջանակներում հարցվել են լրացուցիչ տեղեկություններ եւ կարծիքներ Միության անդամ պետությունների բարձրագույն դատական ատյաններից եւ պետական մարմիններից:

Համապատասխան տեղեկատվությունը եւ նյութերը Դատարանին տրամադրվել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանի, Բելառուսի Հանրապետության գերագույն դատարանի, Ղազախստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Ղրղզստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Ղրղզստանի Հանրապետության գերագույն դատարանի, Ռուսաստանի

Դաշնության սահմանադրական դատարանի, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարության, Բելառուսի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության նախարարության, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Ղրղզստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Ղրղզստանի Հանրապետության աշխատանքի, սոցիալական ապահովության եւ միգրացիայի նախարարության, Ղրղզստանի Հանրապետության սոցիալական հիմնադրամի, Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության, Ռուսաստանի Դաշնության աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության նախարարության, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության, Արհմիությունների համընդհանուր համադաշնության եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

III. Դատարանի եզրահանգումները

5. Պայմանագրի 1-ին, 5-րդ հոդվածների համաձայն՝ Միությունը, որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն, օժտվում է իրավասությամբ՝ սույն Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում եւ ծավալներով:

Պայմանագրի 8-րդ եւ 19-րդ հոդվածների համաձայն՝ Դատարանը Միության մշտապես գործող մարմինն է, որի իրավասությունը սահմանվում է դրա Ստատուտով: Ստատուտի 2-րդ կետի ուժով՝ Դատարանի գործունեության նպատակն է ապահովել Միության անդամ պետությունների եւ մարմինների կողմից Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի, Միության եւ երրորդ կողմի միջեւ կնքված միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների միատեսակ կիրառումը:

Ղեկավարվելով Ստատուտի 46-րդ և 50-րդ կետերով՝ Դատարանը իրականացնում է Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի դրույթների պարզաբանում՝ կիրառելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) 31-րդ հոդվածին համապատասխան՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով պայմանագրի օբյեկտը և նպատակները:

6. Սույն Խորհրդատվական եզրակացության առարկան է՝ Ստատուտի 46-րդ կետով նախատեսված՝ Միության իրավունքի առանձին նորմերի պարզաբանումը, որոնք կապված են Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության հետ՝ ներառյալ հավասարության սկզբունքի կիրառումը պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելիս Հանձնաժողովում աշխատանքի ստաժը հաշվառելու համար. Միության մշտապես գործող մարմնի ղեկավարի լիազորությունների ծավալը՝ կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման և նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմին Ռուսաստանի Դաշնությունում երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելիս. Միության մարմինների՝ աշխատանքային հարաբերությունները դադարեցրած աշխատակիցների դատավարական իրավունակությունը՝ իրենց կենսաթոշակային ապահովության իրավունքի իրացման հարցերով պարզաբանման համար Դատարան դիմելու հարցում:

7. Դիմողի առաջին հարցը վերաբերում է «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետի պարզաբանմանը՝ անդամ պետության քաղաքացու՝ Հանձնաժողովում աշխատանքի ստաժը Ռուսաստանի

Դաշնությունում դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ ստաժում հաշվառելու հնարավորության մասով:

Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները, որոնք ապահովում են Միության մշտապես գործող մարմինների գործառույթների իրականացումը, «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 2-րդ կետի ուժով Միության միջազգային ծառայողներ են:

«Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի եւ դատարանի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների աշխատելու ժամանակահատվածը հաշվառվում է այն անդամ պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում, որի քաղաքացին են նրանք՝ պետական (պետական քաղաքացիական) ծառայության ժամանակահատվածում սոցիալական երաշխիքների սահմանման եւ պետական ծառայողների (դաշնային պետական քաղաքացիական ծառայողների) երկարամյա ծառայության համար թոշակի նշանակման նպատակով:

8. Միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության հարցերը կարգավորվում են «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 44-րդ, 46-րդ, 47-րդ, 50-րդ, 53-րդ եւ 54-րդ կետերով:

«Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 46-րդ կետում խոսքը Հանձնաժողովի կամ Միության Դատարանի միջազգային ծառայողների աշխատանքի ժամանակահատվածներն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ապահովագրական կամ աշխատանքային ստաժում հաշվառելու մասին է:

«Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 47-րդ կետի համաձայն՝ Միության միջազգային ծառայողների՝ իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում ստացած աշխատավարձը հաշվի է առնվում թոշակի չափը սահմանելիս՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներն են նրանք:

9. «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետը պարունակում է պարտադիր պայմաններ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների կողմից տվյալ իրավունքի ձեռքբերման համար՝ ներառյալ պետական ծառայության նվազագույն անհրաժեշտ ստաժը. Միության մարմնում անմիջապես ազատվելուց առաջ առնվազն 3 տարվա աշխատանքի ժամանակահատվածը. Միության մշտապես գործող մարմիններում պաշտոնից ազատումը, որը կապված չէ մեղավոր գործողությունների հետ. մինչև Հանձնաժողովում եւ Դատարանում աշխատելը՝ դաշնային պետական (պետական քաղաքացիական) ծառայության պաշտոն զբաղեցնելը: Այս պայմաններից թեկուզ մեկի չպահպանումը հանգեցնում է տվյալ նորմի կիրառման անհնարինությանը:

Դատարանը նախկինում ձեւակերպել է իրավական դիրքորոշում այն մասին, որ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետը կրում է հատուկ բնույթ, քանի որ սուբյեկտային կազմով դրա կիրառման ոլորտը սահմանափակված է Հանձնաժողովի Կոլեգիայի եւ Դատարանի այն պաշտոնատար անձանցով ու աշխատակիցներով, որոնք Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ են, ինչպես նաեւ սահմանում է հենց այդ անձանց համար Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակային ապահովության կոնկրետ տեսակի՝ դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի առաջացման պայմանները (2024 թվականի մարտի 28-ի թիվ R-2/24 գործով խորհրդատվական եզրակացություն):

Ի տարբերություն 53-րդ կետի՝ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետը չի պարունակում նշում որեւէ պայմանի մասին՝ Հանձնաժողովում եւ Դատարանում աշխատանքի ժամանակահատվածները պետական ծառայության ստաժում ներառելու համար, եւ կարգավորում է միայն Միության մշտապես գործող մարմիններում միջազգային ծառայության ստաժի եւ անդամ պետություններում պետական ծառայության ստաժի հարաբերակցության հարցը (Դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի խորհրդատվական եզրակացություն):

Այսպիսով, «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետը պարունակում է ընդհանուր պահանջ Միության բոլոր անդամ պետությունների համար այն մասին, որ Հանձնաժողովում եւ Դատարանում միջազգային ծառայողների աշխատանքի ժամանակահատվածը ենթակա է ներառման քաղաքացիության պետության պետական ծառայության ստաժում՝ պետական ծառայություն անցնելու ժամանակահատվածում սոցիալական երաշխիքների սահմանման եւ պետական ծառայողների (դաշնային պետական քաղաքացիական ծառայողների) երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար:

10. Հարկավոր է նշել, որ կարգավորումը, որի համաձայն Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների աշխատանքի ժամանակահատվածը ներառվում է իրենց քաղաքացիության պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում, կապված է Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության առանձնահատկությունների հետ՝ համաձայն «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 44-րդ կետի:

«Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 44-րդ կետի առաջին պարբերության համաձայն՝ Հանձնաժողովի անդամների, Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներն են նրանք:

«Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 44-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան՝ Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության համար պարտադիր մասհանումները Միության մարմինների կողմից իրականացվում են այն անդամ պետությունների կենսաթոշակային հիմնադրամներին, որոնց քաղաքացիներն են նշված անձինք, իսկ կենսաթոշակների վճարման ծախսերը կրում է այն անդամ պետությունը, որի քաղաքացիներն են նրանք:

Այսպիսով, Միության շրջանակներում սեփական կենսաթոշակային համակարգը բացակայում է:

Դրանով պայմանավորված, Միության մշտապես գործող մարմիններում աշխատանքի ժամանակահատվածը միջազգային ծառայողի քաղաքացիության պետության պետական ծառայության ստաժում հաշվառելու պահանջը մեխանիզմ է, որն ապահովում է Պայմանագրի նորմերով նախատեսված Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության երաշխիքները:

11. Հավասարության սկզբունքը, որին հղում է անում դիմողը, իր արտացոլումն է գտնում Միության իրավունքում (Համաձայնագրի 3-րդ հոդված): Սակայն դրա կիրառումը չի կարող հանգեցնել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների համար երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման սահմանված պայմանների ընդլայնված մեկնաբանությանը, որոնք կարգավորված են հատուկ նորմով՝ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետով: Ինքնին տարբեր սուբյեկտների նկատմամբ կենսաթոշակային ապահովության տարբեր իրավական կարգավորումների սահմանումը չի վկայում հավասարության սկզբունքի խախտման մասին, քանի որ այն երաշխավորում է հավասար իրավունքներ եւ պարտականություններ այն սուբյեկտների համար, որոնք իրենց կարգավիճակով եւ գործունեության տեսակով պատկանում են անձանց միեւնոյն կատեգորիային:

Դատարանի մեծ կոլեգիան շարադրվածի հիման վրա եզրահանգում է, որ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետի նորմերը չեն նախատեսում այլ անդամ պետության քաղաքացու՝ Հանձնաժողովում աշխատանքի ստաժը Ռուսաստանի Դաշնությունում դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ ստաժում հաշվառելու հնարավորություն: Միության մշտապես գործող մարմնի միջազգային ծառայողի աշխատանքի ժամանակահատվածը ներառվում է նրա քաղաքացիության պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում:

Միեւնույն ժամանակ, Դատարանի մեծ կոլեգիան հաստատում է 2017 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ R-5/17 գործով խորհրդատվական եզրակացության մեջ շարադրված իրավական դիրքորոշումը՝ Միության շրջանակներում Միության միջազգային ծառայողների աշխատանքի եւ սոցիալական ապահովության տարբեր ասպեկտները կանոնակարգող իրավական ակտի ընդունման հնարավորության մասին: Միության իրավունքում առկա Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության ոչ միատեսակ ռեժիմը՝ պայմանավորված նրանց քաղաքացիությամբ, չպետք է ազդի Միության միջազգային ծառայության միասնության եւ ամբողջականության ապահովման վրա, ինչն արժանի է ուշադրության իրավասու մարմինների կողմից Միության իրավունքի հետագա կատարելագործման համատեքստում:

12. Դիմողի երկրորդ հարցը վերաբերում է Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պարզաբանմանը:

Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ եթե մեկ անդամ պետության տարածքում ձեռք բերված աշխատանքի ստաժը բավարար չէ կենսաթոշակի իրավունքի առաջացման համար, ապա հաշվի է առնվում մյուս անդամ պետությունների տարածքում անդամ պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան ձեռք բերված աշխատանքի ստաժը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի աշխատանքի ստաժը ժամանակի առումով համընկնում է:

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ կենսաթոշակների այն տեսակները, որոնց վրա տարածվում է Համաձայնագրի գործողությունը, սահմանված են Համաձայնագրի 2-րդ հոդվածում:

Ելնելով Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի տառացի մեկնաբանությունից՝ կենսաթոշակների տեսակների ցանկը փակ է եւ ընդլայնված մեկնաբանման ենթակա չէ:

Տվյալ եզրահանգումը հաստատվում է նաեւ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթով, որի հիման վրա կենսաթոշակների (նպաստների) այլ տեսակներ

նշանակվում եւ վճարվում են աշխատավորի (ընտանիքի անդամի) բնակության պետության օրենսդրությանը համապատասխան:

Կենսաթոշակի այն տեսակը, ինչպիսին է «երկարամյա ծառայության կենսաթոշակը», սահմանված է միայն Հայաստանի Հանրապետության (Համաձայնագրի 2.1 ենթակետ) եւ Բելառուսի Հանրապետության (Համաձայնագրի 2.2 ենթակետ) մասով: Ընդ որում, համաձայն Դատարանի հարցման՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության պատասխանի՝ այնպիսի կենսաթոշակի տեսակ, ինչպիսին է «պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ»-ը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չէ: Բելառուսի Հանրապետությունում, ուղղակի նշման ուժով, Համաձայնագիրը չի տարածվում պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակների վրա:

Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության առնչությամբ «երկարամյա ծառայության կենսաթոշակ»-ը նշված չէ որպես կենսաթոշակի տեսակ, որի վրա տարածվում է Համաձայնագրի գործողությունը:

Համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 103 որոշմամբ հավանության արժանացած՝ Կենսաթոշակային ապահովության ոլորտում համագործակցության մասին միջազգային պայմանագրի հայեցակարգի, «Պայմանագիրը չպետք է տարածվի զինված ուժերի եւ այլ զինվորական կազմավորումների զինծառայողների, ներքին գործերի մարմինների հրամանատարական եւ շարքային կազմի անձանց, նրանց ընտանիքի անդամների, այլ անձանց կենսաթոշակային ապահովության հարաբերությունների վրա, որոնք, հատուկ օրենսդրության համաձայն, կենսաթոշակային ապահովության մասով հավասարեցված են նշված կատեգորիաներին, ինչպես նաեւ պետական ծառայողների վրա (Ռուսաստանի Դաշնությունում՝ պետական քաղաքացիական ծառայողների)»: Այսպիսով, Համաձայնագիրը մշակելիս պայմանավորվող կողմերն ի սկզբանե չեն

նախատեսել դրա գործողությունը տարածել պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակների վրա: Հենց այդպիսի մոտեցումն էլ իրացվել է Համաձայնագրում:

Դատարանի մեծ կոլեգիան արձանագրում է, որ պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակը չի մտնում Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի (այդ թվում՝ 2.5 ենթակետում) թվարկված կենսաթոշակների տեսակներից որեւէ մեկի մեջ:

Միեւնույն ժամանակ, Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետում սահմանված է, որ կենսաթոշակների այլ տեսակներ (այսինքն՝ այն տեսակները, որոնք ուղղակիորեն սահմանված չեն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետում), նշանակվում եւ վճարվում են աշխատավորի (ընտանիքի անդամի) բնակության պետության օրենսդրությանը համապատասխան:

Դատարանի մեծ կոլեգիան այս կապակցությամբ եզրահանգում է, որ Համաձայնագիրը՝ ներառյալ 7-րդ հոդվածի 2-րդ կետը, չի ընդգրկում Ռուսաստանի Դաշնությունում դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի առաջացման համար անհրաժեշտ ստաժի հաշվարկման հարցերը:

13. «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետի շրջանակներում» Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի՝ կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարին՝ Հանձնաժողովի միջազգային ծառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին միջնորդագիր ուղարկելու պարտականության առաջացման եւ այդ պարտականությունը «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետի անալոգիայով» իրականացնելու վերաբերյալ դիմողի հարցի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրա ձեւակերպման ժամանակ դիմողի կողմից թույլ է տրվել տեխնիկական սխալ: Նորմը, որը նախատեսում է Հանձնաժողովի

կոլեգիայի նախագահի կողմից նման միջնորդագրի ուղարկումը, պարունակվում է «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետում: Իր հերթին, այդ հիմնադրույթի 54-րդ կետը չի շոշափում վերոհիշյալ միջնորդագիրն ուղարկելու հարցը, այլ նախատեսում է Միության մշտապես գործող մարմինների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների աշխատանքի ժամանակահատվածի ներառումը համապատասխան անդամ պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում:

Հաշվի առնելով շարադրվածը՝ դիմողի հարցի էությունն այն է, թե արդյո՞ք Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի՝ վերոհիշյալ միջնորդագիրն ուղարկելու պարտականությունն առաջանում է այն դեպքում, երբ աշխատանքի ստաժը, որը ձեռք է բերվել պաշտոնատար անձի կամ աշխատակցի կողմից Միության մշտապես գործող մարմնում (մարմիններում) իր աշխատանքի ժամանակահատվածում (եւ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետի հիման վրա ենթակա է ներառման պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում), այդ պաշտոնատար անձին/աշխատակցին տալիս է երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակմանը հավակնելու իրավունք:

Այս կապակցությամբ Դատարանի մեծ կոլեգիան եզրահանգում է, որ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետը, ինքնին, կարող է հիմք հանդիսանալ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից դրանով նախատեսված միջնորդագիրը կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարին ուղարկելու համար միայն այն դեպքում, եթե նման միջնորդագրի առարկան Միության միջազգային ծառայող հանդիսացող, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող եւ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետում նշված բոլոր մյուս պայմաններին համապատասխանող անձի երկարամյա ծառայության կենսաթոշակի սահմանումն է:

Անհրաժեշտ է նշել, որ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի իրացումը՝ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետին համապատասխան, կապված է ռուսաստանյան օրենսդրության առանձնահատկությունների հետ, որը կանոնակարգում է դրա նշանակման ընթացակարգը, որն իրականացնում են լիազորված դաշնային գործադիր մարմինները:

Այսպես, երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակումը, այդ թվում՝ դաշնային պետական քաղաքացիական ծառայողներին, կանոնակարգվում է Ռուսաստանի Դաշնության կենսաթոշակային ապահովության ոլորտի ազգային օրենսդրությամբ («Ռուսաստանի Դաշնությունում պետական կենսաթոշակային ապահովության մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքով, Ռուսաստանի Դաշնության Նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 1141 «Այն պաշտոնների ցանկի մասին, որոնցում ծառայության (աշխատանքի) ժամանակահատվածները ներառվում են դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար պետական քաղաքացիական ծառայության ստաժում» հրամանագրով, Ռուսաստանի Դաշնության աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության նախարարության 2017 թվականի մայիսի 22-ի թիվ 436ո հրամանով):

Դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի սահմանման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում (Ռուսաստանի Դաշնության աշխատանքի նախարարության 2017 թվականի մայիսի 22-ի թիվ 436ո հրամանի թիվ 1 հավելված), երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի թվում սահմանված է «դաշնային պետական մարմնի միջնորդագիրը երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ»:

«Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան՝ երկարամյա ծառայության համար կենսաթոշակի սահմանման մասին որոշումն ընդունում է կենսաթոշակային

ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման ու իրականացման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարը՝ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կամ Դատարանի նախագահի առաջարկով:

Ինչպես նշել է Դատարանի մեծ կոլեգիան 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ R-5/18 գործով խորհրդատվական եզրակացության մեջ, Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը եւ Դատարանի նախագահին օժտված են միջնորդագիր ուղարկելու լիազորությամբ, որի հիման վրա կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարն երկարամյա ծառայության կենսաթոշակ սահմանելու հարցով ընդունում է համապատասխան որոշում:

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը, որը աշխատողի նկատմամբ իրականացնում է վարձու աշխատողի ներկայացուցչի լիազորություններ, հիմքեր ունի «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետի առաջին պարբերության երկրորդ նախադասությամբ նախատեսված միջնորդագիրն ուղարկելու համար, եթե անհրաժեշտ համապատասխան ստաժ ունեցող Միության ծառայողը, ով Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է, մինչեւ Հանձնաժողովում աշխատելը զբաղեցրել է Ռուսաստանի Դաշնության պետական ծառայության պաշտոններ, Միության մարմնում աշխատել է առնվազն 3 տարի եւ նրա ազատումը կապված չի եղել մեղավոր գործողությունների հետ:

Հաշվի առնելով շարադրվածը՝ Դատարանի մեծ կոլեգիան եզրահանգում է, որ բոլոր պայմանների պահպանման դեպքում, որոնց համակցությամբ որոշվում է դաշնային պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը, համաձայն «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ կետի, Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը կամ Դատարանի նախագահը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող՝ Հանձնաժողովի եւ

Դատարանի աշխատակիցների եւ պաշտոնատար անձանց նկատմամբ երկարամյա ծառայության կենսաթոշակ սահմանելու վերաբերյալ միջնորդագիր է ուղարկում կենսաթոշակային ապահովության ոլորտում իրավասու մարմին:

Դատարանի մեծ կոլեգիան միեւնույն ժամանակ նշում է, որ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետի հիման վրա Հանձնաժողովի եւ Դատարանի պաշտոնատար անձանց ու աշխատակիցների աշխատանքի ժամանակահատվածները ներառվում են այն անդամ պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում, որի քաղաքացիներն են նրանք, այդ թվում՝ պետական ծառայողների (դաշնային պետական քաղաքացիական ծառայողների) երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար: Ընդ որում, նշված կետի գործողության ոլորտը տարածվում է Միության այն միջազգային ծառայողների վրա, որոնք Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ են:

Դատարանի մեծ կոլեգիան նաեւ հաստատում է R-5/18 գործով խորհրդատվական եզրակացության մեջ շարադրված իրավական դիրքորոշումը Միության մարմինների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների կենսաթոշակային ապահովության վերաբերյալ, որին համապատասխան, «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 54-րդ կետը, ի տարբերություն դրա 53-րդ կետի, կիրառելի է այն անձանց նկատմամբ, ովքեր, մինչեւ Հանձնաժողովում եւ Դատարանում աշխատելը, չեն ունեցել Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքացիական ծառայության ստաժ:

Այսպիսով, Միության մշտապես գործող մարմնի պաշտոնատար անձը կամ աշխատակիցը, ով Ռուսաստանի քաղաքացի է եւ ունի Հանձնաժողովում եւ(կամ) Դատարանում ընդհանուր տեւողությամբ աշխատանքային ստաժ, որը համապատասխանում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար սահմանված ստաժին, իրավունք ունի, «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 44-րդ, 46-րդ, 47-րդ եւ 54-րդ

կետերի հիման վրա, հավակնելու երկարամյա ծառայության կենսաթոշակի, որը նշանակվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ՝ դաշնային պետական քաղաքացիական ծառայողների համար սահմանված պայմաններով եւ կարգով, անկախ նման պաշտոնատար անձի կամ աշխատակցի՝ Հանձնաժողովում եւ (կամ) Դատարանում աշխատելու ժամանակահատվածին նախորդող ժամանակահատվածում պետական քաղաքացիական ծառայության ստաժի առկայությունից:

Այն դեպքում, երբ այդ պաշտոնատար անձը կամ աշխատակիցն անմիջապես Հանձնաժողովից կամ Դատարանից ազատվելուց հետո անցնում է կենսաթոշակի, հարց է առաջանում այն մասին, թե որ մարմնի միջնորդագիրը կարող է հիմք հանդիսանալ կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարի կողմից նշված անձանց երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին միջնորդագրի (որոշման) ընդունման համար:

Դատարանի մեծ կոլեգիան այս կապակցությամբ նշում է, որ այդ պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների նկատմամբ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթով (ներառյալ դրա 54-րդ կետը) նախատեսված կենսաթոշակային ապահովության ոլորտի սոցիալական երաշխիքների կիրառման հիմքը նրանց մասնակցությունն է աշխատանքային իրավահարաբերություններին գործատուի հետ՝ ի դեմս Հանձնաժողովի եւ (կամ) Դատարանի, որոնց լիազորված ներկայացուցիչները նման իրավահարաբերությունների առնչությամբ, Միությունում գործող կանոնների համաձայն, Հանձնաժողովի Կոլեգիայի նախագահը կամ, համապատասխանաբար, Դատարանի նախագահն է:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Դատարանի մեծ կոլեգիան «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 44-րդ, 46-րդ, 47-րդ, 53-րդ եւ 54-րդ կետերի փոխկապակցված ընթերցման հիման վրա եզրահանգում է, որ վերոնկարագրյալ

դեպքերի նկատմամբ ենթակա է կիրառման «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրության 53-րդ կետով նախատեսված ընթացակարգը, որը թույլ է տալիս ապահովել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության մասին նորմերի արդյունավետ իրացումը՝ հավասարության եւ մարդու ու քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների գերակայության սկզբունքների հիման վրա:

Տվյալ եզրահանգումը տարածվելու է Ռուսաստանի Դաշնությունից բացի այլ անդամ պետությունների քաղաքացի հանդիսացող պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների վրա՝ նրանց քաղաքացիության պետությունում օրենսդրության նորմերի ընդունման դեպքում, որոնք նրանց հիմքեր կտան հավակնելու երկարամյա ծառայության կենսաթոշակի, նաեւ իրենց գործատուի կողմից՝ ի դեմս հանրային իշխանության մարմնի կամ միջազգային կազմակերպության իրավասու մարմնի՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար միջնորդագիր ուղարկելու պահանջի առկայության դեպքում:

14. Չորրորդ հարցի վերաբերյալ դիմողը խնդրում է պարզաբանում տրամադրել Համաձայնագրի գործողությունը Միության մարմինների միջազգային ծառայողների վրա տարածվելու վերաբերյալ:

Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ այն կիրառվում է աշխատավորների եւ նրանց ընտանիքների անդամների նկատմամբ: Ինչպես բխում է 1-ին հոդվածից՝ Համաձայնագրի նպատակների համար «աշխատավոր» ասելով պետք է հասկանալ անդամ պետության այն քաղաքացուն, ում կենսաթոշակային իրավունքները ձեւավորվում են կամ ձեւավորվել են մեկ այլ անդամ պետության տարածքում՝ աշխատանքային կամ այլ գործունեության իրականացման միջոցով:

Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան՝ աշխատավորների կենսաթոշակային իրավունքները ձեւավորվում են կենսաթոշակային վճարների հաշվին նույն պայմաններով եւ նույն կարգով, ինչ

աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների ձեւավորումը, իսկ աշխատավորներին (ընտանիքի անդամների) կենսաթոշակ նշանակելու եւ վճարելու իրավունքի իրացումը՝ նույն պայմաններով, ինչ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների համար:

Այսպիսով, Համաձայնագրին համապատասխան՝ աշխատավորի քաղաքացիության պետությունից բացի այլ անդամ պետությունում (աշխատանքի տեղավորման պետությունում) աշխատավորի կենսաթոշակային իրավունքների ձեւավորման պայմանն է աշխատավորի կողմից այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան աշխատանքային գործունեության իրականացումը եւ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների հետ հավասար հիմունքներով նրա օրենսդրությամբ սահմանված՝ նրա կենսաթոշակային հիմնադրամին պարտադիր վճարներ կատարելու պահանջների կատարումը:

Դատարանի մեծ կոլեգիան՝ սրա հետ կապված, նշում է, որ կենսաթոշակային իրավունքների ձեւավորման կարգը, որը Պայմանագրի հիման վրա ենթակա է կիրառման Միության միջազգային ծառայողների նկատմամբ, էականորեն տարբերվում է Համաձայնագրով սահմանված աշխատավորների կենսաթոշակային իրավունքների ձեւավորման կարգից:

Միության միջազգային ծառայողների նկատմամբ նախատեսված է հատուկ ռեժիմ, որին համապատասխան, նրանց կենսաթոշակային իրավունքները, որոնք կապված են Միության մարմնի կամ մարմինների հետ իրենց իրավահարաբերությունների հետ, ձեւավորվում են Պայմանագրի պայմանների պահպանմամբ՝ այն անդամ պետության կենսաթոշակային օրենսդրությանը համապատասխան, որի քաղաքացիներն են նրանք, այլ ոչ թե Միության մարմնի գտնվելու պետության օրենսդրությանը համապատասխան:

«Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 44-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների, ովքեր միջազգային ծառայողներ են,

կենսաթոշակային ապահովության համար պարտադիր մասհանումները Միության մարմինների կողմից իրականացվում են առանց աշխատավարձից պահումների՝ Միության բյուջեի միջոցների հաշվին այն անդամ պետությունների կենսաթոշակային հիմնադրամներին, որոնց քաղաքացիներն են նշված անձինք՝ համապատասխան անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ չափերով: Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Դատարանի դատավորների, պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների կենսաթոշակների վճարման ծախսերը կրում է այն անդամ պետությունը, որի քաղաքացիներն են նրանք:

Համաձայնագիրը չի տարածվում Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային իրավունքների ձեւավորման հետ կապված իրավահարաբերությունների վրա, որոնք կարգավորվում են Պայմանագրի հատուկ նորմերին համապատասխան, այդ թվում՝ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթում պարունակվող նորմերով:

Դատարանի մեծ կոլեգիան շարադրվածի հիման վրա եզրահանգում է, որ Միության միջազգային ծառայողների՝ տվյալ Համաձայնագրով սահմանված կենսաթոշակային իրավունքները չեն առաջանում նրանց գտնվելու երկրում, եւ Համաձայնագրի իմաստով նրանք չեն կարող համարվել «աշխատավորներ»:

Հետեւաբար, «Միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագրի գործողությունը չի տարածվում Միության միջազգային ծառայողների վրա, որոնք մեկ անդամ պետության քաղաքացիներ են եւ աշխատանքային գործունեություն են իրականացնում մեկ այլ անդամ պետության տարածքում:

15. Դիմողի հինգերորդ հարցը վերաբերում է Ստատուտի 46-րդ կետի շրջանակներում Միության մշտապես գործող մարմիններում նախկինում աշխատած պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների՝ Միության իրավունքի՝ աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված դրույթների պարզաբանման դիմումներով Դատարան դիմելու հնարավորությանը:

Պայմանագրի 2-րդ հոդվածի չորրորդ պարբերությանը համապատասխան՝ «պաշտոնատար անձինք» ասելով պետք է հասկանալ անդամ պետությունների այն քաղաքացիներին, որոնք նշանակված են Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների եւ Հանձնաժողովի դեպարտամենտների տնօրենների տեղակալների, ինչպես նաեւ Դատարանի քարտուղարության ղեկավարի, Դատարանի քարտուղարության ղեկավարի տեղակալների եւ Դատարանի դատավորների խորհրդականների պաշտոններում. նույն հոդվածի տասնչորսերորդ պարբերությանը համապատասխան՝ «աշխատակիցներ» ասելով պետք է հասկանալ անդամ պետությունների այն քաղաքացիները, որոնք Միության մշտապես գործող մարմիններում աշխատում են իրենց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի հիման վրա եւ որոնք պաշտոնատար անձինք չեն:

Անհրաժեշտ է նշել, որ «Սոցիալական երաշխիքների մասին» հիմնադրույթի 53-րդ եւ 54-րդ կետերով նախատեսված սոցիալական երաշխիքները տարածվում են Միության Հանձնաժողովում եւ Դատարանում զբաղեցրած պաշտոններից ազատված անձանց վրա, այսինքն՝ նրանց վրա, ովքեր նման իրավունքների իրացման պահին այլեւս չեն գտնվում աշխատանքային հարաբերությունների մեջ Միության մարմինների հետ: Համապատասխանաբար, Պայմանագրի դրույթներով նախատեսված՝ աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված իրավունքների իրացումը հնարավոր է ոչ միայն անմիջապես այդ անձանց կողմից Միության մշտապես գործող մարմիններում աշխատանքային գործառույթների կատարման ժամանակ, այլեւ նրանց զբաղեցրած պաշտոններից ազատվելուց հետո:

Նման եզրակացությունները համահունչ են նաեւ կենսաթոշակային ապահովության ոլորտում Պայմանագրով սահմանված սոցիալական երաշխիքները Միության մարմնի պաշտոնատար անձի կամ աշխատակցի կողմից Միության մարմնի հետ աշխատանքային իրավահարաբերությունների դադարեցումից հետո ընկած ժամանակահատվածի վրա տարածելու վերաբերյալ Դատարանի կողմից նախկինում մշակված դիրքորոշմանը, ինչը չի բացառում Միության մարմնի ազատված աշխատակցի իրավունքը՝ Ստատուտի 46-րդ կետով

սահմանված կարգով պարզաբանման դիմումով Դատարան դիմելու համար (2024 թվականի մարտի 28-ի թիվ R-2/24 գործով խորհրդատվական եզրակացություն): Ընդ որում, նման դիմումի ընդունելի լինելու հարցը լուծվում է Դատարանի կողմից յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները, դիմողի կողմից կազմակերպությունում աշխատանքի ժամանակահատվածի հետ իրավական կապի հիմնավորումը եւ Ստատուտի ու Կանոնակարգի պահանջների խիստ պահպանմամբ:

Տվյալ մոտեցումն իրավական որոշակիություն է մտցնում Միության մշտապես գործող մարմիններում նախկինում աշխատած պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների դատավարական իրավասուբյեկտության վերաբերյալ, չի սահմանափակում Դատարանի դիմելու նրանց իրավունքը:

16. Դատարանի մեծ կոլեգիան շարադրվածի հիման վրա ներկայացնում է հետևյալ պարզաբանումները՝

16.1. Միության իրավունքը չի նախատեսում Միության մարմնի պաշտոնատար անձի կամ աշխատակցի աշխատանքի ստաժն այն պետությունում պետական ծառայողների (դաշնային պետական քաղաքացիական ծառայողների) երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար հաշվառելու հնարավորություն, որի քաղաքացին նա չէ: Միության մշտապես գործող մարմնի միջազգային ծառայողի աշխատանքի ժամանակահատվածը ներառվում է նրա քաղաքացիության պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժում:

16.2. Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետը չի ընդգրկում Ռուսաստանի Դաշնությունում դաշնային պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի ծագման համար անհրաժեշտ ստաժի հաշվարկման հարցերը:

16.3. Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը կամ Դատարանի նախագահը՝ Պայմանագրի սոցիալական երաշխիքների մասին հավելվածով նախատեսված՝ Միության միջազգային ծառայողների կենսաթոշակային ապահովության մասին

նորմերի հիման վրա (ներառյալ 54-րդ կետը) եւ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ պետական քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ սահմանելու համար որոշված պայմանների առկայության դեպքում, որոնք Պայմանագրի ուժով ենթակա են կիրառման Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող Միության միջազգային ծառայողների նկատմամբ, կենսաթոշակային ապահովության ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության դաշնային մարմնի ղեկավարին է ուղարկում միջնորդագիր՝ Միության միջազգային ծառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ:

Սույն ենթակետում նշված՝ Միության միջազգային ծառայողների նկատմամբ երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման կարգի կիրառման ոլորտը, որը պայմանավորված է ռուսաստանյան օրենսդրության մեջ կենսաթոշակի այս տեսակի իրավական կարգավորման առանձնահատկություններով, չի տարածվում Միության այն միջազգային ծառայողների վրա, որոնք Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ չեն:

16.4. Համաձայնագիրը չի տարածում իր գործողությունը Միության մշտապես գործող մարմինների միջազգային ծառայողների վրա, որոնք մեկ անդամ պետության քաղաքացիներ են եւ իրենց գործառույթն իրականացնում են այլ անդամ պետության տարածքում՝ պետական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման մասով:

16.5. Միության մշտապես գործող մարմիններում աշխատանքային հարաբերությունների դադարեցումը չի բացառում Միության նախկինում աշխատած միջազգային ծառայողների՝ Ստատուտի 46-րդ կետի շրջանակներում Միության իրավունքի դրույթների պարզաբանման համար Դատարան դիմելու հնարավորությունը: Դատարանի՝ պարզաբանում իրականացնելու իրավասության առկայության հարցը լուծվում է Դատարանի կողմից յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները, դիմողի կողմից Միության

մշտապես գործող մարմիններում աշխատանքի ժամանակահատվածի հետ իրավական կապի հիմնավորումը:

IV. Եզրափակիչ դրույթներ

Սույն Խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝

Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Կ.Կ. Ջունուշյան

Ա.Ա. Զաքարյան

Ե.Ժ. Իսմայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբաև

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան